ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և Երևանի քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի «Երևան քաղաքի Սիսակյան N22 հասցեում կառուցվող շենքի բնակարաններն անհատույց օտարելու մասին» N 299-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.100 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Կարինա Մելքոնյանին, Աննա Մելքոնյանին, Արտաշես Մելքոնյանին, իսկ 7-րդ հարկի հ.62 մեկ սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ Մելքոնյանին»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևանի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N299-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն։

Երևանի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N299-Ա որոշմամբ Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.60 երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարվել է Ալբերտ Մելքոնյանին և Կարինա Մելքոնյանի ընտանիքին։

Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.28 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Մաշտոցի շրջխորհրդի գործկոմի ԲՏԱ վարչության 26.10.1994թ. հ.19 կարգադրությամբ հատկացվել է շրջանի ՆԳ աշխատակից Ա.Մելքոնյանի ընտանիքի օգտագործմանը որպես խորդանոց։

Վերը նշված բնակարանում 1999 թվականից հաշվառված բնակվում են Ալբերտ Մելքոնյանը, Կարինա Մելքոնյանը, Արտաշես Մելքոնյանը, Աննա Մելքոնյանը (հիմք՝ Մաշտոցի վարչական շրջանի անձնագրային բաժնի կողմից 30.05.2011թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը)։

Երևանի ավագանու վերը նշված որոշմամբ Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.60 երեք սենյականոց բնակարանն, որպես մեկ ընտանիքի գույք, անհատույց օտարվել է Ալբերտ Մելքոնյանին, Կարինա Մելքոնյանին, Աննա Մելքոնյանին և Արտաշես Մելքոնյանին։

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների 1-ին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 5-ի /գործ հ.2-1382/ վճռի համաձայն Ալբերտ Մելքոնյանը և Կարինա Մելքոնյանը ամուսնալուծվել են։ Վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ։

Հաշվի առնելով վերը նշված դատական վճռի առկայությունը՝ Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.28 բնակարանը քաղաքացիների կողմից փաստացի /բնեղենով/ բաժանվել է 2 մասի, որպես առանձին անշարժ գույքի միավորներ։

Կարինա Մելքոնյանը և Ալբերտ Մելքոնյանը դիմել են Երևանի քաղաքապետին, խնդրելով հաշվի առնել, որ իրենք երկու տարբեր ընտանիքներ են՝ հատկացված երեք սենյականոց բնակարանը փոխարինել մեկ և երկու սենյականոց բնակարաններով։

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի Հ.299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ